

...ЮДЫМН, КОГДА ШУМИТ ГРОЗА» հանրահայտ արժեք, պարզ և որոշակիորեն հաստատում է գեղարվեստական ստեղծագործության և կյանքի կապը, որը Չարենցի համար մեկընդմիջում դառնում է ոչնչով չփոխարինելի գեղագիտական գաղափարներ:

Մի կողմից կյանքի հետ մերձեցումը, մյուս կողմից գեղարվեստական նոր, դարի ու ժամանակի ոգուն համապատասխան ձևերի ու միջոցների յուրացումը օգնում են Չարենցին տեսնելու և գնահատելու հայ բազմազարյան գրականության ավանգուդը, այդ թվում նաև՝ մեծ մայրաքաղաքի պոետներին: Այստեղ խոսքը վերաբերում է 1920—1921 թթ. գրված «Տաղարան» ընդհանուր խորագրով բանաստեղծությունների շարքին, որը գիտական հրատարակության առաջին հատորի տրամաբանական հանգույցներից է: Չարենցը դիմում է ժողովրդական հնարաններին, պատկերներին, փխրսփախությանը, լեզվամտածողությանը ոչ թե տարերայնորեն, այլ որոշակի նպատակով: Հայրենիքի պատկերը, մարդկային հույզերի,

ապրումների, սպասումների, հիասթափությունների, հաղթանակների երգը սրանով չի վերջանում: Ընթանալով զժվարությանը գտնված ճանապարհով՝ Չարենցը այնուհետև ստեղծում է սովետահայ պոետիան զարգարող իր լավագույն գործերը:

Միշտ չէ, որ գիտական հրատարակության իրականացման բարդությունները պայմանավորվում են հեղինակի ապրած ժամանակաշրջանի հեռավորությամբ: Պատահում է, որ հեղինակի կյանքի ոլորտալուստները և ստեղծագործությունների բարդությունը ևս հրատարակչներին անխուսափելի զժվարությանների առաջ են կանգնեցնում: Այդպիսի հեղինակ է նաև Եղիշ Չարենցը: Ահա թե ինչու պետք է եղիշ մեծ բանաստեղծի երկերի ներկա հատորը կազմող և ծանոթագրող Ա. Չաբարյանի տեքստարանական-բանասիրական ուշադրով աշխատանքը, որը համապատասխանում է գիտական հրատարակությանը ներկայացվող պահանջներին:

Ն. ԱԳԱՅԱՆ

Э. Г. ТУМАНЯН, *Очерки исторического развития надежных форм новоармянского литературного языка*, Издательство академии наук СССР, Москва, 1962, 190 стр., цена 1 р. 05 к.

Լ. Կ. ԹՈՒՄԱՆՅԱՆ, *Հայ նոր գրական լեզվի հոլովական ձևերի պատմական զարգացման ակնարկներ*, ՍՍՍՐ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Մոսկվա, 1962, 190 էջ, գինը 1 ռ. 05 կ.:

Ռուսաց լեզվով գրված հայագիտական աշխատությունները ուրույն տեղ են զբաղեցնում հայ բազմահարուստ լեզվաբանական գրականության մեջ. դրանք կարևոր նշանակություն ունեն մասնավորապես հայ լեզվաբանական մտքի նվաճումների մասսայականացման տեսակետից: Այդ իմաստով էլ միանգամայն շնորհակալ եւ ողջունելի գործ է կատարել ՍՍՍՐ գիտությունների ակադեմիայի լեզվաբանության ինստիտուտը, հրատարակելով բանասիրական գիտությունների թեկնածու Լ. Կ. Թումանյանի «Հայ նոր գրական լեզվի հոլովական ձևերի պատմական զարգացման ակնարկներ» աշխատությունը:

Հեղինակն այստեղ քննության նյութ է դարձրել հայագիտության համար տեսական ու գործնական նշանակություն ունեցող այն հարցը, թե երկարատև պատմական զարգացման ընթացքում ի՞նչ փոփոխություններ ու կերպաշաղկապություններ են կրել հայերենի հոլով-

ական ձևերը, և ինչպե՞ս է ձևավորվել արևելահայ գրական լեզվի հոլովման ու հոլովական համակարգը:

Այդ հարցերը քննելիս է. Թումանյանը առաջնորդվել է գիտական ճիշտ սկզբունքով. շատ լավ բմբոնելով, որ ժամանակակից հայերենի հոլովման ու հոլովական համակարգը, իրոք, բավական երկարատև զարգացման ընթացքում լեզվի կրած ձևափոխությունների արգասիք է, նա հանդես է բերել պատմական մոտեցում և աշխատել հենց այդ նույն դիրքերից պատկերել հոլովական ձևերի պատմական զարգացումը:

Ներածության մեջ է. Թումանյանը նախ հիմնավորում ու ցույց է տալիս հայերենի հոլովական ձևերի պատմական ուսումնասիրության կարևորությունը, նշում այդ բնագավառում հայագիտության ձևաբանական ոլորտի նվաճումները և ապա՝ ավելի հանգամանորեն խոսում է իր հետապնդած սխալական նպատակների, աշխատ-

տուվյան բաժինների ու դրանցում քննարկված հարցերի մասին, ընդգծելով հատկապես այն, որ իր նպատակն է եղել հիմնականում թրեյդերներին հոլովների ու նրանց ձևերի դարգացումը արևելահայ դրական լեզվում, XVII դարից սկսած մինչև մեր օրերը» (էջ 5)։

Բայց սա, իհարկե, չի նշանակում, թե նա պետք է սահմանափակվեր արևելահայերենի շրջանակներում ու բավարարվեր միայն նրա հոլովական ձևերի վերլուծությամբ. նման մոտեցումը խիստ միակողմանի կլիներ և հնարավորություն չէր ընձեռի՝ ուրվագծելու հայերենի հոլովական համակարգի դարգացման ուղին և պարզելու նրա կրած ձևափոխությունների ու ապրած տեղաշարժերի պատկերը ամբողջ խորությամբ։ Ուստի և միանգամայն ճիշտ է վարվել հեղինակը, որ նախապես, առանձին բաժիններում օնոմիային է ենթարկել զրաբարի ու միջին հայերենի հոլովման համակարգերը, տվել դրանց համառոտ բնութագիրը, կանգ առնելով հատկապես այն տարրերությունների ու առանձնահատկությունների վրա, որ երևան են հասնում նրանք արևելահայ դրական լեզվի համեմատությամբ։

Բայց այստեղ էլ պետք է ասել, որ եթե առաջին դեպքում նա սոսկ զրաբարի հոլովման համակարգի ընդունված ու հանրահայտ նկարագիրն է տվել, ապա երկրորդ դեպքում միջին հայերենի հոլովական առանձնահատկությունների մասին խոսելիս՝ նաև լեզվական կոնկրետ տվյալների վերլուծություն է կատարել, ցույց տալով, օրինակ, թե ինչ յուրահատկություններ ունեն հոլովման ու հոլովական ձևերը կոստանդինոպոլսից, Հովհաննես Քլկուրանցու, Վարդան Այդեկցու, Նաղաշ Հովնաթանի, ինչպես նաև մի քանի ձեռագրերի (№ 3204, № 695) լեզվում։

Այսքանով էլ, բնականաբար, բավարար հիմք է ստեղծվել արևելահայ դրական լեզվի հոլովական ձևերի պատմական դարգացման քննության համար, որը և, աշխատության հիմնական ու առանցքային մասը կազմելով, աչքի է ընկնում մի շարք արժանիքներով։

Այսպես՝ առաջին. իր աշխատության մեջ է. Թումանյանը ոչ միայն հայերենի պատմական դարգացման շրջանների հոլովական ձևերի միջև եղած օրգանական կապն է տեսնում, ոչ միայն նրանց դարգացմանը նայում է լեզվի մեջ կատարված փոփոխությունների՝ հին որակի տարրերի աստիճանական մահացման և նորերի առաջացման տեսանկյունից, այլև հենց դրա հիման վրա լեզվական բազմաթիվ փաստերի միջոցով աշխատում է ցույց տալ ու հաստատել, որ նոր հայերենի հոլովման համակարգը ծաղկում է հին հայերենի հոլովական ձևերից և հանդիսանում է ժամանակի ընթացքում դրանց

կրած օրինաչափ կերպարանափոխությունների արդյունքը։

Երկրորդ՝ այդ ամենը պարզ դարձնելու համար նա կատարել է լեզվաբանական ու բանասիրական հանգամանալից աշխատանք. այն է՝ զննել ու ուսումնասիրել է ինչպես XVII—XVIII, այնպես էլ XIX—XX դարերի բազմաթիվ գրավոր հիշատակարաններ ու աղբյուրներ և դրանցից քաղած հարուստ փաստերի ցուցադրմամբ բոլոր կողմանից պատկերել արևելահայ դրական լեզվի հոլովման ու հոլովական ձևերի դարգացման ու կանոնավորման ընթացքը։

Լեզվաբանուհու կատարած այդ տքնաչափ աշխատանքն ունի նաև մի այլ կարևոր նշանակություն. զրավոր աղբյուրների լեզվական տվյալների վերլուծությունները լավագույն պատկերացում են տալիս առանձին գրողների ու հեղինակների կիրառած հոլովման ու հոլովական ձևերի մասին և պարզ դարձնում այն յուրահատկությունները, որոնցով աչքի է ընկնում նրանց լեզուն։

Երախտովոր աշխատության արժանիքներից մեկն էլ այն է, որ հեղինակը չի բավարարվել բոլոր ժամանակագրության զրավոր բազմաթիվ աղբյուրներից լեզվական հարուստ փաստեր ու նյութեր քաղելով, այլ մի շարք դեպքերում դրանց հիման վրա լեզվաբանական արժեքավոր ընդհանրացումներ է կատարել. դրանով ավելի ակնհայտ դարձնելով իր՝ լեզվական երևույթները զննելու, վերլուծելու և ճիշտ գնահատելու շրջանորժն ու կարողությունը։

Այս բոլորը ինքնին ցույց է տալիս, որ է. Գ. Թումանյանը կարողացել է լուծել իր առաջ դրած խնդիրը, զրախոսվող աշխատությամբ միանգամայն օգտակար գործ կատարելով ինչպես հայագիտության, այնպես էլ ընդհանուր լեզվաբանության համար։

Հիմնականում հաջողված այս աշխատությունը գերծ չէ, սակայն, մի շարք թերություններից, սխալներից ու բացերից։

Հայերենի հոլովների պատմական զարգացման իր ուսումնասիրությունը է. Թումանյանը, զրախոսաբար, առաջ է տարել վերլուծության բավական միօրինակ ու միանման հանապարհով. հոլովման ու հոլովական իրողությունները, դրանց աստիճանական զարգացման ընթացքը տարրերակված ձևով քննելու փոխարեն, նա գերադանցապես բավարարվել է գրողների ու հեղինակների, զրավոր մի շարք աղբյուրների ու հիշատակարանների լեզվի հոլովման ու հոլովական ձևերը ցուցադրելով։ Բայց հենց յուրաքանչյուր դեպքում ևս նա միատեսակ վերլուծություններ է կատարել, նկարագրելով բացառապես, թե հայերենի հոլովները եզակի և հոգնակի թվերում ինչ պատկեր են ներկայացնում, ասենք, Ջաբարիա Ազուլեցու, Կ. Սարաֆյանի,

Խ. Արուսյանի, Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Պ. Պոռոյանի, Բաֆֆու, Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Դ. Դեմիրճյանի և շատ ուրիշների գործերում կամ առանձին երկերում:

Ուսումնասիրություն կատարելու նման միօրինակ եղանակը մի կողմից հեղինակի շարադրանքը որոշ տեղեր դարձրել է մակերեսային և զրկել խոր բովանդակությունից, իսկ մյուս կողմից՝ լայն դուռ է բացել բազմաթիվ կրկնությունների համար, որոնցով էլ հենց հեղեղված է ամբողջ աշխատությունը. այսպես՝ այն հանրահայտ միտքը, որ արևելահայ գրական լեզվում բացառականը ու հուլովման ժամանակ կազմվում է -ուց, իսկ մնացած բոլոր դեպքերում -ից վերջավորությամբ, է. Թումանյանը կրկնում է ամեն մի հեղինակի լեզվի հուլովական ձևերի մասին խոսելիս. օրինակ, նա մեկը մյուսի ետևից հայտնում է, որ Խ. Արուսյանի «Վերք Հայաստանի» վեպում «բացառական հուլովր դեպքերի ճշող մեծամասնության մեջ գործ է ածվում -ից (ավելի հազվադեպ՝ -ուց) վերջավորությամբ» (էջ 99). «Ազդարար»-ում «բացառականը դեպքերի մեծ մասում գործ է ածվում -ից, երբեմն՝ -ուց վերջավորությամբ» (էջ 102). Մ. Պատկանյանցի «Պարզե մանկանց» գրքում «բացառական հուլովր դեպքերի ճշող մասի մեջ վերջանում է -ից-ով» և այլն, և այլն (էջ 107):

Նույնպիսի ավելորդ կրկնություններ շատ կան նաև այն էջերում, ուր քննարկվում է արևելահայ գրական լեզվում գոյականների հոգնակիի կազմման հարցը (էջ 108, 131, 139, 142, 148, 151, 157, 167 և այլն):

Նմուշի համար բերվող այս և նման բազմաթիվ այլ կրկնությունները և վերլուծություններ կատարելու միօրինակ եղանակը խանգարել և թույլ չեն տվել հեղինակին՝ պարզ պատկերելու որոշ հուլովումների ու հուլովական ձևերի առաջացումը: Նվ իրո՞ք. չափից ավելի տարվելով դրավոր աղբյուրների հուլովական ձևերի նկարագրությամբ, նա անխուսափելիորեն երբեմն շեղվել է հիմնական հարցերից և այդ պատճառով էլ չի պարզել, օրինակ, թե ինչպես է առաջացել ու ձևավորվել ժամանակակից հայ գրական լեզվի վա(ն) հուլովումը, որ, դրաբարում իր ուղղակի նախատիպը «չունենալով», դիտական որոշակի հետաքրքրություն է ներկայացնում. մինչդեռ Կ. Սաֆարյանի «Գիրք» որ կոշի բանալի դիտություն» գրքում հենց նրա նկատած «Վասն վաղուհան» արժեքավոր օրինակը (էջ 78) ցույց է տալիս անվանի հայադեպ Մ. Արևիկյանի հայտնած, լայց է. Թումանյանի կողմից անտեսված այն մտքի ճշտությունը, որ վա(ն) հուլովումը ծագում է «հին լեզվի «ևան» վերջավորությունից, որ երևում է որոշ թվով

բառերի մեջ, ինչպես ամիս, ամսեան, ժամանակ, ժամանակեան, շաբաթ, շաբաթեան, վաղի, վաղուհան» («Հայոց լեզվի տեսություն», Երևան, 1931, էջ 358):

Հայերենի հուլովական ձևերի պատմական զարգացումը ցույց տալու համար է. Թումանյանը, ճիշտ է, կատարել է հսկայական աշխատանք ուսումնասիրելով ոչ միայն բազմաթիվ հեղինակների երկերի, այլև մի շարք պարբերականների ու որոշ ձեռագրերի համապատասխան լեզվական նյութերը, բայց, պետք է ասել, որ բոլոր դեպքերում չէ, որ աղբյուրների հուլով ընտրություն է կատարել կամ կարողացել է դրանք ծառայեցնել իրենց նպատակին: Այսպես, բոլորովին էլ պարզ չէ, թե ինչու միջին հայերենի հուլովական ձևերի առանձնահատկությունները ներկայացնելիս նա բավարարվել է միայն որոշ աղբյուրներով և անտեսել, ասենք, Մխիթար Հերացուն, Ֆրիկին, Մմբատ Սպարապետին, Դրիգոր Աղթամարցուն, Ամիրդովաթ Ամասիացուն և շատ ուրիշների, որոնց աշխատություններն ընդհանրապես հայոց լեզվի պատմական զարգացման ընթացքը պատկերելու գեղեցիկ աղբյուրներ են հանդիսանում: Կամ՝ պարզ չէ՞ միթե, որ ոչ մի սկզբունքով էլ չի առաջնորդվել հեղինակը, երբ հայ նոր դասական գրողների լեզվի հուլովական ձևերը քննելիս՝ հենվել է բացառապես նրանց մի երկու, մեծ մասամբ ոչ գլխավոր գործերի վրա և ցուցադրել միայն դրանց հուլովական ձևերը, որոնք, սակայն, չեն կարող ընդհանուր ու նույնը չլինել այս կամ այն գրողի նաև մյուս գործերի լեզվի համար: Ցույց տալու համար, օրինակ, թե ինչպես պատկեր են ներկայացնում հուլովական ձևերը Բաֆֆու լեզվում, նա ընտրել է միայն «Խենթ» և «Ջահրումար»-ը, մի կողմ թողնելով «Սամվել» վեպը, որ ոչ միայն մեծ գրողի ստեղծագործությունների, այլև նրա լեզվի պսակն է կազմում: Ավելացնենք, որ աշխատության մեջ է. Թումանյանը օգտագործել է իր թեմայի համար առանձին կարեորություն չներկայացնող որոշ աղբյուրներ, ինչպես նաև առանձին երկերի հուլովական ձևերը նկարագրելիս հավատարիմ չի մնացել իր իսկ նախնորած ժամանակագրության սկզբունքին. այսպես՝ նա խոսում է նախ՝ Հովհաննես Թլկուրանցու (XV—XVI դդ.) և ապա XIII դարի առակագիր Վարդան Աղեկցու, Հովհ. Հովհաննիսյանի, Ղ. Աղայանի և ապա՝ Գ. Սունդուկյանի մասին և այլն:

Երախտովորդ աշխատության ակնհայտ թերություններից մեկն էլ այն է, որ նրա հեղինակը ըստ արժանվույն ու բավարար չափով չի ուսումնասիրել իր թեմային վերաբերող լեզվաբանական դրականությունը. ինչպես՝ կարելի է հայերենի հուլովական ձևերի պատմական զարգացումն ուսումնասիրել և չխոսել մեծ լեզվա-

յան Հր. Աճառյանի «Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների» աշխատության այն հատորի մասին, որ լույս է տեսել դեռևս 1957 թ. և հայերենի հոլովման ու հոլովական համակարգի պատմական զարգացման ընթացքը ռացիոնալ առարկայական դեպքերի հանդիսանում է կամ ինչպես կարելի է քննել առանձին հեղինակների լեզվի հոլովման ու հոլովական ձևերը և անտեսել այն լեզվաբանական ուսումնասիրությունները, որտեղ այսպես թե այնպես նրանց պատկերն է տրված: Առավել զարմանալին, սակայն, այն է, որ աշխատության մեջ դպրի ծառայություններ են վերագրվում այնպիսի լեզվաբանների (Եր. Վանցյան և ուրիշներ), որոնք առանձին մեծ վաստակ չունեն հայերենի հոլովման ու հոլովական համակարգի պատմական զարգացման ուսումնասիրության գործում:

Աշխատության մեջ տեղ են գտել նաև մի շարք փաստական սխալներ ու անճշտություններ. հեղինակը, գնալով Գր. Վանցյանի հետքերով, կարծում է, որ իբր միսիոներական գրականության լեզուն իր պարզությամբ ու մաքրությամբ գերազանցում է անցյալ դարի՝ ոչ միայն 30-ական, այլև նույնիսկ 60-ական թրվականների ստեղծագործությունների լեզվին» (էջ 84), որ իբր թե այն ընդհանրապես չափով ավելի մոտ է ժամանակակից հայերենին, քան ու. Արուսյանի լեզուն, Նազարյանի լեզուն» (էջ 90): Այնինչ հայ գրական լեզվի մշակման ուղղությամբ անցյալ դարի 50—60-ական թվականներին ծավալված թե՛ պայքարը և լեզվի պատմական փաստերը ցույց են տալիս, որ դա

ընավ էլ այդպես չէ, և միսիոներական գրականության ու նույն ժամանակի աշխարհաբար այլ գործերի հենց հոլովման ու հոլովական ձևերի միջև ոչ մի էական տարբերություն գոյություն չունի: Նմանապես միայն Գր. Վանցյանին անսալով՝ կարելի է նոր լեզվի թունդ հակառակորդ Առ. Արարատյանին դնել ու. Արուսյանի ու Ստ. Նազարյանի կողքին և նրան ևս համարել «նոր լեզվի ջատագով» (տե՛ս էջ 47):

Իբրև «մանրութենք» նշենք, որ աշխատության մեջ կողմն քառի գրաբարյան հոգեակիի համար կողմանք ճիշտ ձևի փոխարեն տրվում են կողմունք (էջ 16, 21), աշակերտ քառի աշակերտալ գործիական հոլովաձևի փոխարեն՝ աշակերտի (էջ 17) ձևը և կամ՝ բանն այնպես է ներկայացվում, որ իբր «իր խոնարհման տիպով մեծ քառի ոչնչով չի տարբերվում բան գոյականից» (էջ 21), աշուն, զարուն, տուն արմատական բառերի ուն-ը ածանց է (էջ 71, 115) և այլն: Ասենք նաև, որ գրքի հայերեն օրինակներում տեղ են գտել մի շարք վրիպակներ (էջ 22, 31, 55, 69, 82, 98, 145, 150 և այլն):

Հիշյալ բոլոր թերություններով հանդերձ՝ է. Թումանյանի «Հայ նոր գրական լեզվի հոլովական ձևերի պատմական զարգացման ակնարկներ»-ը նվաճում է հայագիտության համար, և ցանկալի է, որ միութենական հեղինակավոր հրատարակությամբ այսուհետև ևս լույս տեսնեն նման և առավել հաջող հայագիտական աշխատություններ:

Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

T. MANKOWSKI, *Orient w polskiej kulturze artystycznej*, Wrocław—Kraków, 1959, Zakład Narodowy imienia Ossolińskich, 255 str., 60 zł.

Տ. ՄԱՆԿՈՎՍԿԻ. *Արևելքը լեհական գեղարվեստական մշակութթի մեջ*. Վրոցլավ—Կրակով, 1959, Օսոլինսկիների անվան ազգային գրադարանի հրատարակչություն, 255 էջ, գինը 60 զլ.:

Հայտնի է, որ Հնագույն ժամանակներից ի վեր Գալիցիայի և Արևելքի միջև գոյություն են ունեցել ոչ միայն բազմազան ու անտեսական, այլև մշակութային սերտ կապեր: Արևելքի հետ Գալիցիայի ունեցած մշակութային փոխադարձ կապերին է նվիրված լեհ պատմաբան-արվեստագետ Տադեուշ Մանկովսկու՝ ստորև գրախոսվող մենագրությունը:

Մեզ Պոսպոլիտայի հարաբարապետության, ոսկերչական արվեստի և շուկանագործական արտագրության վրա արևելյան արվեստի թուզած

ազդեցության մասին իր մի շարք հատուկ ուսումնասիրություններից՝ հետո, Տ. Մանկովսկին

¹ «Լվովի հայկական մայր տաճարի արխիվը» («Archeion», 1932, տետր 10), «Լվովահայերի արվեստը», Կրակով, 1934, «Խահմեդական արվեստը Լեհաստանում XVII—XVIII դարերում», 1935, «Լեհական գործվածքներն ու անդենագործ առարկաները XVI—XVIII դարերում», Վրոցլավ, 1934 (բոլորն էլ լեհերեն լեզվով):